ՀՍԽՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ ՈՒՍՈՒՄՆԱ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ՍԵԿՏՈՐ

ԾՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ

ԲՈՒՀ-երի յեվ ԲՏՈՒՀ-ների համար
(Բացի սոցիալ տնտեսական ԲՈՒՀ-երից յեվ բաժինների)

ՊԵՏՀՐԱՏ 1933

Գլխ. խմբագիր՝ Մ. Սանթրոսյան
Տեխ. խմբագիր՝ Գ. Զենյան
Սրբագրիչ՝ Վ. Տերոյան
Հանձնված է արտադրության՝ 5 սեպտեմբերի 1933 թ.
Ստորագրված է տպելու՝ 11 սեպտեմբերի 1933 թ.

Գլավլիտ 1980, Հրատ. 2719, Գլավլիտ 8233 (բ), Տիրաժ 1000

330.1 (07)
08 FEB 2018

ԾՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ

Բացատրական.

Ցելնելով ԲՈՒՀ-երի և տեխնիկումների մասին ԽՍՀՄ-ի կենտգործկոմի 1932 թ. սեպտեմբերի 19-ի վորոշումից՝ ԲՈՒՀ-երի քաղաքատնտեսության ծրագիրը սահմանում է ուսումնական նյութի այն բնույթն ու ծավալը, վորը պետք է հիմնովին յուրացնի ուսանողը՝ համաձայն ԲՈՒՀ-ի տիպի, առարկան անցնելու համար հատկացված ժամանակի և նյութի մշակման իրական հնարավորությունների:

Քաղատնտեսության դասավանդումը պետք է.

1) Յուրաքանչյուր ավարտողին տա Մարքսի—Լենինի տնտեսական ուսմունքի հիմնական գիտելիքներ:

2) Յուրաքանչյուր ուսանողին զինի կապիտալիզմի կործանման և պրոլետարական հեղափոխության հաղթանակի անխուսափելիության գիտականորեն հիմնավորված ըմբռնմամբ և յերկու սիստեմների պայքարի պարզ գիտակցությամբ:

3) Մերկացնի Մարքսի-Լենինի քաղաքատնտեսության աղավաղումների գլխավոր գծերն իդեալիստների և մեխանիստների կողմից և իրապես յուրաքանչյուր ուսանողի զինի հակամարքսիստական հիմնական կոնցեպցիաները քննադատելու և մերկացնելու կարողությամբ:

Ծրագրի ուսումնական նյութի ներքին դասավորման համար յելակետ է հանդիսացել այն պահանջը, վորպեսզի ուսանողն իրապես յուրացնի Մարքս-Լենինյան քաղաքատնտեսության հիմնական պրոբլեմներին վերա-

բերող դիտելիքների սիստեմատիկ ու ճշտիվ սահմանված շրջան:

Ծրագրի սխեման է. 1) ներածություն, 2) ապրանք, 3) փող, 4) կապիտալ և հավելյալ արժեք, 5) աշխատավարձ, 6) կապիտալիստական կուտակման ընդհանրական օրենքը, 7) կապիտալի շրջապտույտը և պտույտը, 8) արտադրության գինը և շահույթ, 9) առևտրական կապիտալ և առևտրական շահույթ, 10) փոխատվական կապիտալ և վարկ, 11) հողային ռենտա և կապիտալիզմի զարգացումը գյուղատնտեսության մեջ, 12) հասարակական կապիտալի վերարտադրություն և ճգնաժամեր, 13) իմպերիալիզմի լենինյան տեսությունը, 14) կապիտալիզմի ընդհանուր կրիզիսը:

Ներածությունը, կապիտալի շրջապտույտը և պտույտը, առևտրական կապիտալ և առևտրական շահույթ, փոխատվական կապիտալ և վարկ, կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամ թեմաները դասախոսն անցնում է բացառապես լեկցիոն ձևով: Դասընթացի մնացած թեմաները, համաձայն բարձրագույն դպրոցների դասավանդման մեթոդների մասին ԽՍՀՄ-ի Կենտգործկոմի վորոշման՝ անցվում են՝ 1) դասախոսությունների միջոցով, 2) ԲՈՒՀ-ից դուրս ուսանողի ինքնուրույն աշխատանքի, 3) դոցենտի կամ ասպիրանտի ղեկավարությամբ խմբական, սեմինարական պարապմունքների միջոցով, վորի ընթացքում պետք է հիմնովին մշակվի դասախոսության ժամանակ տրված և տվյալ թեմայի համար մատնանշված գրականությունը:

Գրականության նկատմամբ նյութի մշակումը հիմնականում պետք է կատարվի ԲՈՒՀ-երի համար հարմարեցրած դասագրքով (Լապիդուս և Ոստրովիտյանով, վերջին հրատարակություն): Մարքսի «Կապիտալից» հանձնարարվում են միայն առանձին գլուխներ, Լենինի և Ստալինի աշխատություններից առանձին գլուխներ և բաժիններ: «Իմպերիալիզմի լենինյան տեսությունը» թեման պետք է ամբողջովին մշակվի ըստ Լենինի: Ինչ վերաբերում է քաղաքատնտեսության դասընթացի և

11-29029գր

խորհրդային տնտեսության տեսության սահմանագծման, ծրագիրը յելնում է նրանից, վոր քաղաքատնտեսության դասընթացը խնդիր չդնելով զուգահեռ կերպով տալու խորհրդային տնտեսության տեսության դասընթացը—սահմանափակվում է քաղաքատնտեսության ամենակարևոր բաժիններում եքսկուրսիաներ և իլյուստրացիաներ անելով խորհրդային տնտեսությունից, նպատակ ունենալով քաղաքատնտեսության դասավանդումը ներծծել յերկու սիստեմների պայքարով, ավելի ուժեղ ընդգծել քաղաքատնտեսության կատեգորիաների պատմականությունը և խորհրդային սիստեմի առավելությունները կապիտալիստականի հանդեպ:

Յուրաքանչյուր թեմայում սահմանելով, թե ինչպիսի հակամարքսիստական կոնցեպցիաներ պետք է յենթարկվեն քննադատության ու մերկացման, ծրագիրը յելնում է նրանից, վոր ԲՏՈՒՀ-ներում և ԲՈՒՀ-երում (վոչ սոցիալ-տնտեսագիտական) քաղաքատնտեսության դասընթացում այդ քննադատությունն իր ծավալով պետք է սահմանափակվի հակամարքսիստական հոսանքների միայն հիմնական ուղղություններով, իսկ իր խորացման աստիճանով համապատասխանի հատկացված ժամանակին, լսարանի մակարդակին և ուսանողների ինքնուրույն աշխատանքի հնարավորություններին, այնպես, վորպեսզի այդ քննադատությունը չանդրադառնա Մարքսի և Ենգելսի բուն տնտեսական տեսության մշակման վրա: Քաղաքատնտեսության մեջ կուսակցականության սկզբունքի կիրառումը, պայքարն ամեն տեսակ հակամարքսիստական տեսությունների դեմ, քաղաքատնտեսության դասավանդման կապն արդիականության հետ, յերկու սիստեմների պայքարի խնդիրներին հատուկ ուշադրություն նվիրելը, եքսկուրսիաներ և իլյուստրացիաներ խորհրդային տնտեսությունից, հատուկ ուշադրություն քաղաքատնտեսության լենինյան ետապի լուսաբանության, ինչպես և կուսակցական վորոշումներին և ընկ. Ստալինի աշխատություններին,—այս բոլորը պետք է ոժանդակեն քաղաքատն-

տեսության դասավանդումը բարձր աստիճանի վրա դնելու: Այս բոլորը պրոֆեսորա–դասախոսական կազմից պահանջում են լուրջ ուշադրություն դարձնել դասավանդման մեթոդական կողմին:

Լսարանական պարապմունքների ժամերի որինակելի բաշխումն ըստ ծրագրի առանձին թեմաների.

№№	Թեմաների անունները	Ընդամենը քանի ժամ պարապմունք	Դրանցից դասախոսություն
1	Ներածություն (դասախոսություն)	4	4
2	Ապրանք	12	4
3	Փող	8	2
4	Կապիտալ և հավելյալ արժեք	12	4
5	Աշխատավարձ	8	2
6	Կապիտալիստական կուտակման ընդհանուր օրենքը	8	2
7	Կապիտալի շրջապտույտը և պտույտը (դասախոսություն)	2	2
8	Արտադրության գինը և շահույթ	12	4
9	Առևտրական կապիտալ և առևտրական շահույթ (դասախոսություն)	2	2
10	Փոխատվական կապիտալ և վարկ (դասախոսություն)	2	2
11	Հողային renta և կապիտալիզմի զարգացումը գյուղատնտեսության մեջ	14	4
12	Հատուցական կապիտալի վերարտադրությունը և ճգնաժամերը	12	4
13	Իմպերիալիզմի լենինյան տեսությունը	22	8
14	Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը (դասախոսություն)	2	2
	Ընդամենը	120 ժամ	46

ԾՐԱԳԻՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.—(Դասախոսություն).

Մարքսիզմի յերեք աղբյուրները, յերեք բաղկացուցիչ մասերը: Դասական քաղաքատնտեսությունը: Ուտոպիկ սոցիալիզմ: Գերմանական դասական փիլիսոփայություն: Կապիտալիզմի մանր–բուրժուական քննադատությունը: Մարքսի գիտական սոցիալիզմը և կապիտալիզմի հեղափոխական քննադատությունը:

Արտադրողական ուժեր և արտադրական հարաբերություններ: Արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների մասին Մարքսի ուսմունքի իդեալիստական և մեխանիստական աղավաղումները: Հասարակության տնտեսական կառուցվածքը և հասարակական–տնտեսական ֆորմացիաները: Քաղատնտեսությունը լայն իմաստով վորպես «մարդկային հասարակության մեջ նյութական կենսական բարիքների արտադրությունն ու փոխանակումը ղեկավարող օրենքներն ուսումնասիրող գիտություն» (Ենգելս՝ «Անտի–Դյուրինգ»): Քաղաքատնտեսությունը նեղ իմաստով, վորպես գիտություն, վորն ուսումնասիրում է արտադրության կապիտալիստական ձևը և դրան համապատասխանող հարաբերություններն՝ իրենց առաջացման, զարգացման և կործանման ընթացքում: Խորհրդային տնտեսության տեսության նշանակությունը սոցիալիստական շինարարության համար: Լայն մտքով քաղաքատնտեսության մասին Մարքսի, Ենգելսի և Լենինի հայացքների աղավաղումները: Քաղաքատնտեսության կուսակցականությունը:

Մարքս–լենինյան քաղաքատնտեսությունը վորպես պրոլետարիատի դասակարգային պայքարի զենք: Լենինյան ետապը քաղաքատնտեսության մեջ:

1–ին թեմա. ԱՊՐԱՆՔ.

1. Ապրանքը, վորպես բուրժուական հասարակության տարրական բջիջը: Ապրանքի հակասությունը: Սպառողական արժեք և արժեք:

2. Ապրանքի ներքին հակասությունը վորպես ապրանքային տնտեսության հակասությունների արտահայտություն: Աշխատանքը վորպես արժեքի հիմք: Ապրանք ստեղծող աշխատանքի հակասությունները: Աշխատանք՝ կոնկրետ և վերացական (աբստրակտ): Մաս-

նավոր և հասարակական: Անհատական և հասարակայնորեն-անհրաժեշտ: Պարզ և բարդ աշխատանք:

2. Ընդհանուր գաղափար արժեքի ձևի մասին: Արժեքի հարաբերական և համարժեք (եկվիվալենտ) ձևը: Արժեքի ձևերն իրենց զարգացման մեջ-պարզ, ծավալուն, ընդհանուր, փողային: Փողը, վորպես ընդհանուր համարժեք: Դինը վորպես արժեքի փողային արտահայտություն: Արժեքը վորպես ապրանքային արտադրության շարժման հիմնական որենք: Արժեքը վորպես պատմական կատեգորիա: ԽՍՀՄ տնտեսության պլանային բնույթը: Արդյունքի (պրոդուկտի) ապրանքային ձևի եյությունը ԽՍՀՄ-ում:

3. Ընդհանուր գաղափար ապրանքային ֆետիշիզմի մասին: Ապրանքային ֆետիշիզմի օբյեկտիվ բնույթը:

1. Արժեքի կատեգորիաների իդեալիստական և մեխանիստական ըմբռնումների քննադատությունը:

Հավասարակշռության որենքի քննադատությունը: Բուխարինի «աշխատանքային ծախսումների» որենքի և Պրեոբրաժենսկու «յերկու ռեգուլատորների» տրոցկիստական տեսության քննադատությունը: Լենինն արժեքի տեսության տեղի և նշանակության մասին:

Գրականություն.—1) Լապիդուս և Ոստրովիտյանով—Քաղաքատնտեսություն 7-րդ հր. 29-95 եջ. 2) Մարքս—«Կապիտալ» 1929 թ. հր. 1-ին հատ. 1-ին գլ. 1-ին և 2-րդ բաժ 1-10 եջ. 3) Լենին—3-րդ հր. 18-րդ հատ. «Կ. Մարքս» հոդվածը, «արժեք» բաժինը—15-17 եջ:

2-րդ Թեմա. ՓՈՂ

1. Ապրանքային աշխարհի յերկատումը ապրանքի և փողի: Փողը վորպես ընդհանուր համարժեք: Ապրանքային արտադրության և փողի զարգացումը. տարբեր ապրանքներ փողի դերում: Ապրանքային աշխարհից վոսկու առանձնացումը, վորպես ընդհանուր համարժեքի:

2. Փողի ֆունկցիաները: Փողը վորպես արժեքի

չափանիշ: Փողը վորպես շրջանառության միջոց: Ապրանքաշրջանառության Ֆորմուլան: Ա-Փ-Ա: Շրջանառության համար անհրաժեշտ փողի քանակը: Շրջանառության մեջ փողի փոխարինումը արժեքի նշանով: Լիարժեք և վոչ լիարժեք դրամ: Թղթադրամները: Նրանց առաջացումը փողի ֆունկցիաներից, վորպես շրջանառության միջոցի: Ինֆլյացիան և նրա ազդեցությունը ժողովրդական տնտեսության և աշխատավոր մասսաների դրության վրա: Փողը վորպես կուտակման միջոց: (գանձ): Կուտակված փողի նշանակությունն ապրանքային տնտեսության համար: Փողը վորպես վճարման միջոց: Գաղափար վարկի մասին: Գաղափար վարկային փողի մասին: Համաշխարհային փող:

3. Փողի բուրժուական և սոցիալ-ֆաշիստական տեսությունների քննադատություն: Լենինը փողի մասին: Փողի բնույթը խորհրդային տնտեսության մեջ: Փողի դերը ԽՍՀՄ-ում: ԽՍՀՄ փողի խնդրի աջ և «ձախ» ոպորտունիստական և տրոցկիստական մեկնաբանությունների քննադատությունը: Ընկ. Ստալինը խորհրդային վալյուտայի կայունության մասին:

Գրականություն.—1) Լապիդուս և Ոստրովիտյանով—քաղաքատնտ. 5 եջ. 2) Մարքս—«Կապիտալ» 1-ին հատ. 2-րդ գլխ. 3) Լենին—3-րդ հր. 17-րդ հ.—վոսկու նշանակության մասին. 4) Ստալին—զեկուցում 1933 թ. հունվարյան միացյալ պլենումում (առեվարի մասին բաժինը):

3-ՐԴ ԹԵՄԱ՝ ԿԱՊԻՏԱԼ ՅԵՎ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔ.

1. Փողի վերածումը կապիտալի: Պարզ ապրանքային տնտեսության վերածումը կապիտալիստականի: Կապիտալի ընդհանուր Ֆորմուլան—Փ-Ա-Փ և դրա հակասությունները: Բանվորական ուժի վերածումն ապրանքի: Բանվորական ուժը վորպես հատուկ ապրանք: Այսպես կոչված նախնական կուտակում: Բանվորական ուժի և աշխատանքի միջի տարբերությունը: Բանվորական ուժի արժեքը:

2. Աշխատանքի պրոցեսը և հավելյալ արժեքի ստեղծման պրոցեսը: Դաղափար հավելյալ արժեքի մասին: Կապիտալիստական շահագործման տարբերությունը մինչ կապիտալիստական շահագործումից: Կապիտալը վորպես բուրժուական հասարակության արտադրական հարաբերություն:

Հաստատուն և փոփոխական կապիտալ: Հավելյալ արժեքի նորման և շահագործման նորման: Կապիտալի Մարքսյան դասաբաժանման հեղափոխական դերը: Կապիտալի առանձին մասերի դերը հավելյալ արժեքի արտադրության մեջ:

3. Բացարձակ և հարաբերական հավելյալ արժեք: Բանվորական որը և նրա սահմանները: Բանվորների դասակարգային պայքարը բանվորական որվա համար: Հարաբերական հավելյալ արժեքի արտադրությունը: Կապիտալիզմի կողմից աշխատանքի արտադրողականության բարձրացման յերեք հիմնական պատմական շրջանները. հասարակ կոոպերացիա, աշխատանքի բաժանումը մանուֆակտուրայում. մեքենա և խոշոր արդյունաբերություն: Կապիտալիզմի զարգացումը և շահագործման աճումը: Պայքար բանվորական որվա համար ներկայումս և սոցիալ-ֆաշիստների դավաճանական դերը:

4. Հավելյալ արժեքի ուսմունքը վորպես մարքսիստական տեսության անկյունաքարը: Լենինը հավելյալ արժեքի մասին: Հավելյալ արժեքի բուրժուական և սոցիալ-ֆաշիստական տեսությունների քննադատությունը:

5. Վարձու աշխատանքի, հավելյալ արժեքի և կապիտալի կատեգորիաների անկիրառելիությունը ԽՍՀՄ-ի տնտեսության սոցիալիստական ձևերի նկատմամբ: ԽՍՀՄ-ի պետական ձեռնարկությունների և կոլխոզների բնույթի ոչ և «ձախ» ոպորտունիստական ու տրոցկիստական մեկնաբանությունների քննադատությունը:

Գրականություն.—1) Լադիդուս և Ոստրովիտյանով—Քաղաքատնտ. 142–216 եջ. 2) «Կապիտալ» 1-ին հ. 4-րդ գլ. 3) Լենին—10-րդ հ. «Կ. Մարքս»—«Հավելյալ

արժեք» բաժ. 17–19 եջ. 4) Լենին 16-րդ հ. ա) «Բանվորների վաստակը և կապիտալիստների շահույթը Ռուսաստանում» 94–95 եջ. բ) «Կապիտալ և հակրերը» 460–463 եջ. գ) «Բանվորական որը Մոսկվայի նահանգի գործարաններում» 98–99 եջ դ) «Քրտինք քամելու գիտական սիստեմը»—340–341 եջ. ե) «Տեխնիկայի խոշոր հաղթանակներից մեկը» 368–369. զ) «Քաղաքակրթված բարբարոսություն» 622–623. 5) Ստալին—Քաղաքական հաշվետվություն ՀԱՄԿ(Բ)Կ 16-րդ համագումարում 2-րդ բ. § 7 և 8:

4-րդ թեմա. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

1. Բանվորական ուժի արժեքը և գինը: Բանվորական ուժի գնի շեղումները նրա արժեքից: Աշխատավարձը վորպես բանվորական ուժի արժեքի և գնի փոխակերպված ձև: Անվանական (նոմինալ) և իրական (ռեալ) աշխատավարձ: Աշխատավարձի ձևերը: Ժամանակավարձ, դործավարձ, պրեմյալ վարձ, ձեռնարկության շահույթին մասնակցություն: Թեյլորիզմը և Ֆորդիզմը աշխատավարձում: Աշխատավարձի դանազան ձևերի գնահատականը շահագործման ուժեղացման և դրա քողարկման տեսակետից: Աշխատավարձի ազգային տարբերությունները: Աշխատավարձը դաղութային և կիսադաղութային յերկրներում: Գյուղատնտեսական բանվորների աշխատավարձը: Հեղափոխական պրոֆիլությունները և նրանց դերն աշխատավարձի համար մղվող պայքարում: Կապիտալիստական յերկրներում ժամանակից տնտեսական ճգնաժամի պայմաններում աշխատավարձի կատաստրոֆիկ անկումը: Աշխատավարձի իջեցումը վորպես բուրժուազիայի կողմից բանվորների հաղթին ճգնաժամից յելք դտնելու միջոցներից մեկը: Պայքար աշխատավարձի համար ներկայումս:

2. Աշխատավարձի բուրժուական և սոցիալ-ֆաշիստական տեսությունների քննադատությունը:

3. Աշխատավարձի սկզբունքորեն այլ բնույթը ԽՍՀՄ-ում: Աշխատավարձի մակարդակը ԽՍՀՄ-ում և

աշխատանքի արտադրողականությունը: Աշխատավարձի անընդհատ աճը ԽՍՀՄ-ում: Ըստ աշխատանքի քանակի և որակի՝ վարձատրության սոցիալիստական սկզբունքը: Աշխատանքի ճիշտ կազմակերպումը և աշխատավարձի մանը-բուրժուական «հավասարեցման» վերացումը: ԽՍՀՄ-ում գործավարձի սկզբունքային տարբերությունը կապիտալիստական գործավարձից: Աշխատավարձի վողջ սիստեմի վերակառուցումն ընկ. Ստալինի 6 պայմանների հիման վրա:

Գրականություն.—Լապիդուս և Ոստրովիտյանով—Քաղաքատնտ. 217–244 եջ, 2) Մարքս–«Աշխատավարձ, գին և շահույթ» 1925 թ. հր. 9–րդ բաժ. 53–54 եջ. 3) Մարքս–«Վարձու աշխատանք և կապիտալ»–1931 թ. հր. 38–48 եջ. 4) Ստալին. «Առաջին հնգամյակի հանրագումարները»—զեկուցում հունվարյան միացյալ պլենումում—5–րդ բաժին:

5–րդ թեմա. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕՐԵՆՔԸ.

1. Արտադրություն և վերարտադրություն: Պարզ կամ հասարակ և ընդլայնած վերարտադրություն: Հավելյալ արժեքի վերածումը կապիտալի: Մասնավոր սեփականության օրենքների փոխակերպումը կապիտալիստական յուրացման օրենքների: Կապիտալիստական կուտակման տեմպերը վորոշող գործոնները: Կապիտալի վերարտադրությունը վորպես կապիտալիստական հարաբերությունների վերարտադրություն:

2. Կապիտալի կուտակումը և խոշոր արտադրության աճը: Կապիտալի համակենտրոնացման և կենտրոնացման պրոցեսը: Մանր արտադրության քայքայումը խոշոր կապիտալի կողմից: Կապիտալի համակենտրոնացման և կենտրոնացման ազդեցությունը բանվոր դասակարգի վրա: Կապիտալի տեխնիկական և օրգանական կազմը: Կապիտալի օրգանական կազմը և նրա բարձրացումը կապիտալիզմի աճի հետ միասին:

3. Կապիտալի կուտակումը և բանվոր դասակարգի

դրությունը: Կապիտալի կուտակման ազդեցությունը բանվոր դասակարգի դրության վրա կապիտալի կազմի փոփոխման և անփոփոխ մնալու պայմաններում: Կապիտալիստական կուտակումները և հարաբերական դերբնակչություն: Արդյունաբերական պահեստի բանակ, նրա անխուսափելիությունն ու անհրաժեշտությունը կապիտալիզմի համար: Գործազուրկների պահեստի բանակի վերածումը գործազուրկների մշտական բանակի՝ ներկայումս: Պահեստի բանակի ազդեցությունն աշխատավարձի վրա: Բանվոր դասակարգի բացարձակ և հարաբերական աղքատացումը: Կապիտալիստական կուտակման պատմական տենդենցները և բանվոր դասակարգի հեղափոխական պայքարը: Լենինը բանվոր դասակարգի բացարձակ և հարաբերական աղքատացման մասին:

4. Բանվոր դասակարգի աղքատացման մարքսյան տեսության սոցիալ-ֆաշիստական աղավաղումները:

5. Սոցիալիստական կուտակման տարբերությունը կապիտալիստականից: ԽՍՀՄ-ի բանվորների և գյուղացիների նյութական և կուլտուրական մակարդակի անընդհատ բարձրացումը: Գործազրկության վերացումը ԽՍՀՄ-ում: Աղքատացման և պաուպերիզմի վոչնչացումը գյուղում:

Գրականություն.—1) Լապիդուս և Ոստրովիտյանով—քաղաքատնտ. 145–287 եջ. 2) Մարքս «Կապիտալ» 1–ին հատ. 23–րդ գլ. § 1–4, 24–րդ գլ. 7–րդ բաժ. 613–618 եջ. 3) Լենին—16–րդ հ. «Աղքատացումը կապիտալիստական հասարակության մեջ» 212–213 եջ. 4) Ստալին—Առաջին հնգամյակի հանրագումարները—զեկուցում հունվարյան միացյալ պլենումում— 5–րդ բաժ.:

6–րդ թեմա. ԿԱՊԻՏԱԼԻ ՇՐՋԱՊՏՈՒՅՑԸ ՅԵՎ ՊՏՈՒՅՑԸ (դասախոսություն)

Կապիտալի արտադրությունը և շրջանառությունը. դրանց միասնությունը և տարբերությունը: Ընդհանուր գաղափար կապիտալների շրջապտույտի մասին: Շրջ-

ջապտույտի յերեք ստադիաները և յերեք ձևերը: Կապիտալը վորպես շարժում: Ընդհանուր գաղափար կապիտալի շրջանառության մասին: Արտադրության ժամանակը: Շրջանառության ժամանակը: Հիմնական և շրջանառու կապիտալ: Հիմնական կապիտալի շրջանառության յուրահատկությունները: Հիմնական կապիտալի ամորտիզացիան: Կապիտալի շրջանառության արագությունը և նրա ազդեցությունը նրա ոգնությամբ ստացվող հավելյալ արժեքի չափի վրա: Կապիտալի շրջանառության ընդհանուր արագությունը: Մարքսի ուսմունքը կապիտալի շրջանառության մասին և պրոլետարիատի դասակարգային պայքարի տակտիկան: Կապիտալի շրջանառության մասին մարքսյան ուսմունքի իդեալիստական և մեխանիստական աղավաղումների քննադատությունը:

Գրականություն.— Լապիդուս և Ոստրովիտյանով—քաղաքատնտեսություն 6-րդ բաժին 284–316 էջ:

7-րդ թեմա՝ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳԻՆ ՅԵՎ ՇԱՀՈՒՅԹ.

1. Արտադրության ծախքերը և ապրանքի իրական արժեքը: Շահույթը վորպես հավելյալ արժեքի փոխակերպված ձև: Շահույթի նորման: Շահույթի նորմա և հավելյալ արժեքի նորմա: Շահույթի նորման վորոշող գործոնները.—շահագործման նորմա. կապիտալի որգանական կազմը, կապիտալի շրջանառության արագությունը: Շահույթի տարբեր նորմաներ արտադրության տարբեր ճյուղերում: Մրցումը կապիտալիստների միջև և շահույթի միջին նորմայի գոյացումը:

2. Ընդհանուր գաղափար արտադրության գնի մասին: Արտադրության գին և արժեք: Արժեքի փոխակերպումն արտադրության գնի:

3. Արտադրության գնի մարքսյան տեսության բուրժուական քննադատությունը (Բիմ–Բավերկ): Արտադրության գնի մարքսյան տեսության բուրժուական և սոցիալ–ֆաշիստական աղավաղումների քննադատությունը:

4. Շահույթի միջին նորմայի իջեցման տենդենցի որենքը և արտադրության կապիտալիստական ձևի հակասությունների զարգացումը: «Շահույթ»-ի հարցը խորհրդային տնտեսության մեջ: «Շահույթի» կատեգորիայի անկիրառելիությունը ԽՍՀՄ-ի տնտեսության նկատմամբ: Գների գոյացման սկզբունքային այլ բնույթը ԽՍՀՄ-ում:

Գրականություն.— 1) Լապիդուս և Ոստրովիտյանով—քաղաքատնտ. 318–369 էջ. 2) Մարքս–«Կապիտալ» 3-րդ հատոր 1-ին մաս, 1 գլ. 3) Ստալին—«Լենինիզմի հարցերը». «Զրույց Ամերիկայի բանվորական պատգամավորության հետ»: 372–419 էջ:

8-րդ թեմա. ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ՅԵՎ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՇԱՀՈՒՅԹ (դասախոսություն).

Առևտրական կապիտալը վորպես արդյունաբերական կապիտալի առանձնացված մասը: Նրա գործունեության բնագավառը և նրա դերը: Շրջանառության ծախքերի նվազումը և կապիտալի շրջանառության արագացումը:

Առևտրական շահույթը վորպես հավելյալ արժեքի մասը: Առևտրական կապիտալի կողմից մանր արտադրության, հատկապես գյուղացիության շահագործումը: Առևտրական ծառայողների շահագործումը: Խորհրդային առևտրի բնույթը. նրա դերը սոցիալիստական շինարարության տեմպերի արագացման գործում: Պայքար տվյալ ետապում առևտրի դերի «ճախ» թեքաղնահատման դեմ:

Գրականություն.— Լապիդուս և Ոստրովիտյանով. քաղաքատնտ. 370–388 էջ:

9-րդ թեմա. ՓՈԽԱՏՎԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ՅԵՎ ՎԱՐԿ (դասախոսություն)

Ընդհանուր գաղափար փոխատվական կապիտալի մասին: Փոխատվական կապիտալի տարբերությունը արդյունաբերական և առևտրական կապիտալից: Փո-

խատավական կապիտալի չարժումը: Փոխատվական կապիտալը վորպես հատուկ ապրանք: Փոխառությունը վորպես այդ ապրանքի վաճառք: Փոխառության տոկոսը վորպես փոխատվական կապիտալի գին: Փոխառության տոկոսը վորպես հավելյալ արժեքի մի մասը: Տոկոս և ձեռնարկատիրական յեկամուտ: Փոխատվական կապիտալ և բանկեր: Բանկերի դերը կապիտալիզմի պայմաններում: Վարկի հիմնական ձևերը՝ առևտրական և բանկիրային: Վարկի դերը կապիտալիզմի պայմաններում: Վարկը վորպես կապիտալիստական կուտակումն արագացնող գործոն: Վարկի դերը կապիտալիզմի անտագոնիստական հասակությունները սրելու գործում: Խորհրդային վարկի սկզբունքային տարբերությունը կապիտալիստական վարկից: Հաշվարկի և ռուբլով կոնտրոլի նշանակությունը: Խնայդրամարկղները և ներքին փոխառությունները: Միջոցների մոբիլիզացիայի նշանակությունը սոցիալիստական շինարարության բարձր տեմպերի համար:

Գրականություն.— Լապիդուս և Ստրոմիլյանով. քաղաքատնտ. 389–414 եջ:

10-րդ թեմա. ՀՈՂԱՅԻՆ ՌԵՆՏԱ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ.

1. Ցերկրագործության մեջ դիֆերենցիալ շահույթի փոխակերպումը դիֆերենցիալ ռենտայի: Դիֆերենցիալ ռենտան և նրա տեսակները: Բացարձակ ռենտա. ռենտան վորպես հավելյալ արժեքի մասը. ռենտայի տենդենցը: Գյուղատնտեսության մեքենայացումը:

Կապիտալիզմի զարգացումը գյուղատնտեսության մեջ և հողի գնի բարձրացման տենդենցը: Հողի մասնավոր սեփականությունը վորպես գյուղատնտեսության մեջ արտադրողական ուժերի զարգացման արգելակ: Հողի ազգայնացումը և բացարձակ ռենտայի վոչնչացումը: Հողի ազգայնացման անհնարությունը զարգացած կապիտալիզմի պայմաններում: Կապիտալիստների և հողատերերի շահերի ընդհանրությունը, վորն աճում է

11-290299/ա

կապիտալիզմի զարգացման զուգընթաց: Ռենտայի ազդեցությունը բանվոր դասակարգի դրության վրա:

2. Մանր գյուղացիական տնտեսության քայքայումը կապիտալիզմի պայմաններում: Գյուղի դասակարգային չերտավորումը կապիտալիզմի պայմաններում: Դասակարգային պայքարի սրումը գյուղում: Քաղաքի և գյուղի միջև հակադրության աճումը կապիտալիզմի պայմաններում: Կապիտալիզմի վոչնչացման համար բանվոր դասակարգի պայքարի գործում ագրարային հարցի ճիշտ լուծման նշանակությունը: Լենինի ուսմունքը ագրարային հարցում: Ագրարային հարցի ռեվիզիոնիստական հայացքների քննադատությունը: Լենինը և Ստալինը բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի մասին: Պրոլետարիատի և գյուղացիության փոխհարաբերության խնդրում տրոցկիստական և աջ ոպորտունիստական դրույթների քննադատությունը:

3. Հողի ազգայնացումը ԽՍՀՄ-ում և ռենտայի վոչնչացումը: Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման լենինյան պլանի իրականացումը դասակարգային կատաղի պայքարի պրոցեսում: Ագրարային հարցի լենինյան տեսության հետագա զարգացումն ընկ. Ստալինի կողմից: Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը ԽՍՀՄ-ում: Հակահեղափոխական տրոցկիզմը և աջ ոպորտունիզմը կոլխոզների մասին. «ձախ» խեղաթյուրումները գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման պրակտիկայում:

Գրականություն.—1) Քաղաքատնտեսության դասընթաց Կոֆմանի խմբագրությամբ (ռենտայի մասին բաժինը): 2) Լենին՝ 25-րդ հատ. «Թեզիսներ ագրարային հարցի մասին Կոմինտերնի 2-րդ կոնգրեսում» 268–278 եջ: 3) Ստալին–Լենինիզմի հարցերը ա) Լենինիզմի հիմունքների մասին. 5-րդ գլ. գյուղատնտեսության հարցը 51–53 եջ. բ) Գյուղացիական հարցում կուսակցության յերեք հիմնական լոզունգների մասին 313–322 եջ. 4) Ընկ. Ստալինի զեկուցումը Կենտկոմի և ԽՍՀ-ի հունվարյան

միացյալ պլենումում—4-րդ բաժին. 5) Ստալին. Նույն պլենումում ճառը գյուղի աշխատանքների մասին:

11-րդ թեմա՝ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՃԳՆԱԺԱՄԵՐԸ.

1. Հասարակական կապիտալի վերարտադրություն: Հասարակական կապիտալի յերկու ստորաբաժանում: Իրացման (ռեալիզացիա) պրոբլեմը: Հասարակ վերարտադրություն և ընդլայնած վերարտադրություն: Տուգան-Բարանովսկու և Ռ. Լյուքսեմբուրգի՝ վերարտադրության տեսության քննադատությունը: Բուխարինի «Հավասարակշռության տեսության» քննադատությունը:

2. Տնտեսական ճգնաժամեր: Ճգնաժամերի աբստրակտ (վերացական) հնարավորությունը պարզ ապրանքային տնտեսության պայմաններում և նրանց անխուսափելիությունը կապիտալիզմի ժամանակ: Արտադրության հասարակական բնույթի և յուրացման կապիտալիստական ձևի միջի հակասությունը, վորպես ճգնաժամերի հիմնական պատճառ: Կապիտալիստական արտադրության անարխիան. անսահման կուտակման և մասսաների գնողունակության անկման տենդենցը վորպես հիմնական հակասության արտահայտություն:

3. Արդյունաբերական ցիկլ և նրա փուլերը: Ճգնաժամերի պարբերականությունը: Ճգնաժամերի ազդեցությունը բանվոր դասակարգի դրության վրա: Ճգնաժամերի տրոցկիստական տեսության քննադատությունը: Այդ տեսության հակահեղափոխական բնույթը:

4. Լենինի կողմից վերարտադրության և ճգնաժամերի մարքսյան տեսության զարգացումը: Ճգնաժամերի անհնարինությունը ԽՍՀՄ-ում: Մեր տնտեսական դժվարությունների բնույթը և դրանց հաղթահարման ուղիները: Պայքար աջ ոպորտունիստական տեսության և պրակտիկայի դեմ:

Գրականություն.— 1) Քաղաքատնտեսության դասընթաց՝ Կոֆմանի խմբագրությամբ. 2) Լենին՝ 4-րդ

հ. «Ճգնաժամերի դասերը» 164–168 էջ. 3) Ստալին—«Լենինիզմի հարցերը». Կենտկոմի քաղաքական հաշվետվությունը 16-րդ համագումարին 695–717 էջ 2-րդ բաժ. § 751–765 էջ:

12-րդ թեմա. ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԼԵՆԻՆՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ.

Իմպերիալիզմը վորպես կապիտալիզմի բարձրագույն ստադիան: Իմպերիալիզմը վորպես «առհասարակ կապիտալիզմի հիմնական հատկությունների զարգացում և ուղղակի շարունակություն» (Լենին):

2. Արտադրության համակենտրոնացումն ու կենտրոնացումը և մոնոպոլիաների առաջացումը: Մոնոպոլիստական միավորումներ, նրանց ձևերը և գործունեությունը: Մոնոպոլիա և մրցություն: Մրցության ուժեղացումը և սրումը մոնոպոլիայի դերիշխող դերի պայմաններում: Այդ հարցում ընկ. Բուխարինի սխալների քննադատությունը: Զեռնարկությունների ակցիոներական ձևը: Կապիտալի դեմոկրատացման տեսության քննադատությունը:

3. Բանկերը և նրանց նոր դերը: Բանկերի համակենտրոնացման և կենտրոնացման պրոցեսը և արդյունաբերական ու բանկային կապիտալի միաձուլումը:

4. Բանկային կապիտալի միաձուլումը արդյունաբերական կապիտալի հետ: Ֆինանսական կապիտալ և ֆինանսական օլիգարխիա: Ֆինանսական կապիտալի հիլֆերդինգյան մեկնաբանման քննադատությունը:

5. Կապիտալի արտահանումը: Կապիտալի արտահանման պատճառները և աղբյուրները: Կապիտալի արտահանման ձևերը: Կապիտալի արտահանում և ապրանքային արտահանում: Պայքարը կապիտալի գործադրման շրջանների համար: Սպառման չուկաները և հումքի աղբյուրները: Կապիտալի արտահանումը և կապիտալիստական եքսպանսիայի ուժեղացումը: Մետրոպոլիաների, գաղութների և կախյալ յերկրների միջի հակասությունների աճը: Պրոտեկցիոնիզմ և դեմպինգ: Առասպելը խորհրդային դեմպինգի մասին:

6. Աշխարհի բաժանումը կապիտալիստների միություններ մի՛ջև։ Միջազգային մոնոպոլիաներ և նրանց նշանակությունը։ Աշխարհի տերիտորիալ բաժանումը մեծ պետությունների մի՛ջև։ Գաղութների նշանակությունը իմպերիալիստական պետությունների համար։ Պայքար աշխարհի վերաբաժանման համար։ Իմպերիալիստական յերկրների մի՛ջև կայուն համաձայնությունների անհնարությունը։ Միլիտարիզմ և մարինիզմ։

7. Իմպերիալիզմը վորպես կապիտալիզմի հատուկ և վերջին ստադիան։ Կապիտալիզմի պարազիտիզմը և նեխումը։ Իմպերիալիզմը վորպես մեռնող կապիտալիզմ։ Իմպերիալիզմի պատմական տեղը։ Կապիտալիզմի կործանման պրոբլեմը։

8. Իմպերիալիզմի ժամանակ դասակարգային հակասությունների ամը և դասակարգային պայքարի սրումը։ «Իմպերիալիզմը բանվոր դասակարգին մոտեցնում է հեղափոխությանը» (Ստալին)։ Բանվորական շարժման ընդհանուր արմատական շահերը և դրանց անհաշտելիությունը ռեֆորմիզմի հետ։ Գաղութների և կախյալ յերկրների վերածումը պրոլետարական հեղափոխության ռեզերվի։ Իմպերիալիստների մի՛ջև հակասությունների սրումը։

9. Լենինը և Ստալինը կապիտալիզմի տնտեսական և քաղաքական զարգացման անհամաչափության որենքի ուժեղացման մասին։ ԽՍՀՄ-ում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունը։ Կապիտալիզմի անհամաչափ զարգացման որենքի տրոցկիստական ժխտման քննադատությունը։

10. Իմպերիալիզմի սոցիալ-ֆաշիստական «տեսությունների» քննադատությունը,—«ուլտրա-իմպերիալիզմ», «կազմակերպված կապիտալիզմ», «տնտեսական դեմոկրատիա», «դերկապիտալիզմ»։ Իմպերիալիզմի հակահեղափոխական տրոցկիստական և աջ ռեֆորմիստական տեսությունների քննադատությունը։ Ռ. Լյուքսեմբուրգի կիսամենշևիկյան տեսության քննադատությունը։ Իմպերիալիզմի լենինյան տեսությունը

վորպես մարքսիստական քաղաքատնտեսության նոր ետապ։ Իմպերիալիզմի տեսության հետագա զարգացումը ընկ. Ստալինի աշխատություններում։

Գրականություն.—1) Լենին 14-րդ հատ. «Իմպերիալիզմը, վորպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա»։ 2. Կոմինտերնի ծրագիրը 1-ին բաժինը. 3) Կոմինտերնի գործկոմի 12-րդ պլենումի բանաձևը։

13-րդ թեմա. ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՃԳՆԱԺԱՄԸ (դասախոսություն).

Հետպատերազմյան կապիտալիզմի դարաշրջանը վորպես կապիտալիստական սիստեմի ընդհանուր ճգնաժամի դարաշրջան։ Աշխարհի բաժանումը յերկու սկզբունքորեն հակադիր սիստեմների և այդ յերկու սիստեմների պայքարը։ Հետպատերազմյան կապիտալիզմի զարգացման յերեք շրջանները։ Ցերրորդ շրջանի բնութագրումը։ Կապիտալիզմի տնտեսական սիստեմի նեխման ուժեղացումը։ Կապիտալիզմի բոլոր հակասությունների սրումը։ Բանվոր դասակարգի շահագործման ուժեղացումը։ Ստրուկտուրային գործազրկություն։ Բանվոր դասակարգի բացարձակ աղքատացման ուժեղացումը։ Դասակարգային պայքարի սրումը։ Բուրժուական պետության ֆաշիզացումը։ Ֆաշիզմ և սոցիալ-ֆաշիզմ։ Համաշխարհային սպառման չուկայի համար պայքարի սրումը։ Պրոտեկցիոնիզմի, դեմպինգի զարգացումը։ Ընդհանուր ճգնաժամը և գաղութների ու կիսագաղութների սոցիալ-տնտեսական զարգացումը։ «Ապագաղութացման» (դեկոլոնիզացիա) տեսության քննադատությունը։ Ժամանակակից համաշխարհային տնտեսական ճգնաժամը. նրա զարգացումը կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի հիման վրա։ Ժամանակակից ճգնաժամի առանձնահատկությունները։ Ժամանակակից տնտեսական ճգնաժամի կարևորագույն ցուցանիշները։ Ժամանակակից ագրարային ճգնաժամը վորպես կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի բաղկ[illegible] ճգնաժամի նոր ետապը. կապիտալիզմի

ՀՀ Ազգային գրադարան
NL0977936

կայունացման վախճանը և անցումը դեպի հեղափոխությունների ու պատերազմների նոր շրջան: Պայքար աշխարհի նոր վերաբաժանման համար և պատերազմի վտանգի աճը: Դասակարգային պայքարի սրում և հեղափոխական վերելք:

ԽՍՀՄ և կապիտալիստական աշխարհը: Կապիտալիստական յերկրների տնտեսության փլուզման պայմաններում ԽՍՀՄ-ում հնգամյակը 4 տարում հաղթականորեն կատարելու միջազգային նշանակությունը:

Յերրորդ շրջանում՝ արտադրողական ուժերի զարգացման, համաշխարհային պրոլետարական հեղափոխության ուղիների և ետապների գնահատման խնդրում աջ և ձախ ոպորտունիստների և հակահեղափոխական արոցկիզմի դեմ յերկու ճակատի վրա պայքար՝ Կոմինտերնի գլխավոր գծի համար:

Սույն ծրագիրը՝ անշնչան փոփոխություններով թարգմանված է ՌՍՖԽՀ Լուսժողկոմատի 1933 թ. հրատարակած ծրագրից:

1933р-450
11
29028

ПРОГРАММА

Полит. экономии

Госиздат ССРА Эривань 1933